

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՋՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ ԱՍՈՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ուսումնասիրողների կողմից վաղուց արդեն ապացուցված է, որ միջին հայերենում դասական դրաբարի համեմատությամբ տեղի է ունեցել բաղաձայնների էական տեղաշարժ¹: Ընդ որում, հիմնական փոփոխության ենթարկվել է պայթական և պայթաշփական ձայնեղների (բ, դ, զ, ձ, ջ) ու խուլերի (պ, կ, տ, ծ, ճ) շարքը: Քանի որ դրաբարի ուղղադրությունը չէր արտահայտում միջին հայերենի արտասանական առանձնահատկությունները, ապա նշված փոփոխությունը որոշելու համար մինչև վերջերս կիրառվել է երկու հիմնական միջոց՝ ա) օտար բառերի հայերեն տառադարձությունը (հին ֆրանսերեն, լատիներեն, իտալերեն, արաբերեն, պարսկերեն) և բ) ավանդական ուղղագրությունից շեղվող ձեռագրական տարբերակները: Հ. Մուրադյանը իր վերջերս հրատարակված արժեքավոր աշխատության մեջ² նույնպես մեծ տեղ է հատկացնում այդ տվյալներին, բայց հիմնավոր պատճառաբանությամբ նշում նաև նրանց հակասությունները, որոնք հաղթահարելու համար նա դիմում է մի երրորդ միջոցի՝ հայերենի ժամանակակից բարբառների օգնությանը: Համակողմանի հետազոտությամբ պարզվում է, որ միջին հայերենում գոյություն է ունեցել պայթական և պայթաշփական բաղաձայնների առնվազն չորս համակարգ՝ ա) եռաստիճան անտեղաշարժ, երբ ձայնեղները մնացել են ձայնեղ, խուլերը՝ խուլ, շնչեղ-խուլերը՝ շնչեղ-խուլ, բ) եռաստիճան տեղաշարժված, ձայնեղները դարձել են խուլ, խուլերը՝ ձայնեղ, շնչեղ-խուլերը՝ մնացել անփոփոխ, գ) փառաստիճան, ձայնեղները բառասկզբում դարձել են ձայնեղ-շնչեղ, մյուս դիրքերում՝ մնացել ձայնեղ, իսկ խուլերն ու շնչեղ-խուլերը փոփոխություն չեն կրել, դ) երկաստիճան իլլազուրկ, ձայնեղները դարձել են շնչեղ-խուլ, խուլերը՝ ձայնեղ, շնչեղ-խուլերը՝ մնացել նույնը³: Եզրահանգումը կատարված է փաստական այնպիսի հարուստ նյութի վերլուծության հիման վրա, որ չի կարող որևէ կասկած հարուցել: Միայն պետք է ավստոսալ, որ հետազոտության մեջ հեղինակից անկախ պատճառներով բավարար կիրառություն չի գտել միջին հայերենի հնչյունաբանության ուսումնասիրման մի շորորդ միջոց, թեև նրա կարևորությունը նշվել է Հ. Աճառյանի և իր իսկ Հ. Մուրադյանի կողմից⁴: Խոսքը վերաբերում է օտար աղբյուրներում հայերեն բառերի տառադարձություններին, կամ ինչպես Հ. Աճառյանն է ասում,

¹ J. Karst. Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, էջ 29—36: Ս. Ղազարյան, Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960, էջ 167—183:

² Ակնարկներ միջին զրական հայերենի պատմության, հատ. Ա, Երևան, 1972, էջ 109—143 (Հնչյունաբանության բաժին՝ Հ. Մուրադյան: Այսուհետև՝ Ակնարկներ):

³ Նույն տեղում, էջ 123:

⁴ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 6, Երևան, 1971, էջ 674: Ակնարկներ, էջ 26, 111:

«հայերեն բառերի օտար այբուբենով գրված ձևերին»⁵։ Միայն միջին հայերենի ձայնավորներին նվիրված բաժնում Հ. Մուրադյանը օգտագործել է այս կարգի մոտ երկու տասնյակ բառ⁶, քաղելով դրանք Հ. Նալբանդյանի «Արաբական աղբյուրները...» գրքից⁷։ Նույնպիսի մի քանի օրինակ նշված է նաև Կարստի վերոհիշյալ աշխատության մեջ⁸։ Այնինչ ակնհայտ է, որ հնչյունաբանության ուսումնասիրման համար միայն այս ձանադարհը կարող էր տալ առավել «անկողմնապահ» տվյալներ։ Օտար տառադարձությունը հաղթահարում է մի էական արգելք՝ փոխատու լեզուների ավանդական ուղղագրությանը ենթարկվելու անհրաժեշտությունը։ Այստեղ զրերը տառադարձվում են իրենց այն հնչյունական արժեքով, որ ունեն բառի փոխառման պահին, թեև անխուսափելի են արտասանության որոշ փոփոխությունները, քանի որ դժվար է գտնել երկու լեզուների հնչյունական համակարգի լիակատար համապատասխանություն։

Հայագիտությունն առայժմ քիչ է զբաղվել օտար աղբյուրներում հայերեն բառերի տառադարձության ուսումնասիրությամբ, նրանց սակավության կասանհայտության պատճառով։ Այդ բացը, թվում է, որոշ շափով կարող են լրացնել XII—XIII դդ. ասորական աղբյուրները, որոնցում տարբեր առիթներով հիշատակվում են հարյուրավոր հայերեն բառեր՝ մեծ մասամբ անձնանուններ և տեղանուններ։ Այս տեսակետից հատկապես աչքի է ընկնում Միքայել Ասորու «Ժամանակագրությունը»⁹։ «Ժամանակագրությանը» կցված են մի շարք հավելվածներ, որոնցից հինգերորդը ամբողջությամբ նվիրված է հայ ժողովրդի պատմությանը¹⁰։ Այստեղ համառոտ տեղեկություններ են տրվում հայ թագավորների և կաթողիկոսների մասին, սկսած Աբդարից մինչև մ. թ. 913/4 թ.։ Հավելվածում երկու անգամ նշվում է, որ այն քաղված է հայկական մի ինչ-որ ժամանակագրությունից¹¹։ Առկա բազմաթիվ հայկաբանությունները ակնհայտորեն հաստատում են այս տեղեկության հավաստիությունը։ Ավելին, նրանք պարզում են, որ հավելվածի թարգմանիչը անպայման ասորախոս է, եթե ոչ ինքը՝ Միքայելը, ապա որևէ այլ անձնավորություն¹²։ Այս հանգամանքը զգալիորեն բարձրացնում է հավելվածում պարունակվող հայերեն բառերի ասորական տառադարձության արժեքը¹³, քանի որ եթե թարգմանիչը

⁵ Հ. Ա ճ ա ո չ ա ն, նշվ. աշխ., էջ 674։

⁶ Ակնարկներ, էջ 60, 62, 63, 65։

⁷ Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմ. Հ. Նալբանդյան, Երևան, 1965։

⁸ J. Karst, նշվ. աշխ., էջ 30։

⁹ Chronique de Michel le Syrien, éd. J.-B. Chabot, tr. fr. t. I, 1899, t. II, 1901, t. III, 1905, texte syr. t. IV, 1910, Intr. 1924, Paris (հոլովածում ուղղանկյուն փակագծերի մեջ պարունակվող հղումները նշանակում են ասորական բնագրի, այսինքն՝ Ժ.-Բ. Շարոյի հրատարակության 4-րդ հատորի էջերը)։

¹⁰ Michel le Syrien, IV, էջ 770—775, ֆր. թարգմ., II, էջ 503—519։

¹¹ Michel le Syrien, IV, էջ 770, 771։

¹² Հավելվածի բանասիրական քննությանը կանգրդառնանք առաջիկայում։

¹³ Այդ տառադարձությունը առաջինը զնահատել է Ժ.-Բ. Շարոն (Michel le Syrien, III, էջ 505, I) և աշխատել նույնությամբ վերարտադրել իր ֆրանսերեն թարգմանության մեջ։ Սակայն Շարոյի վերարտադրությունը չի կարող կայուն հիմք հանդիսանալ լեզվաբանական ուսումնասիրության համար, քանի որ հանգես է բերում որոշակի անհետևողականություն և պարունակում մի շարք անճշտություններ։

հայ լիներ, ապա դժվար թե կարողանար լիովին ազատվել գրաբարի դասական ուղղագրության կաշկանդումից:

Հավելվածը պարունակում է ավելի քան 200 հայերեն բառ, սակայն ստորև նշվում են միայն նրանք, որոնց կազմի մեջ մտնող հնչյունները միջին հայերենում փոփոխություններ են կրել: Այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ՝ Nerses, Vahan, Masis, Movses և այլն, իհարկե միջին հայերենի հնչյունաբանության ուսումնասիրման համար առանձին հետաքրքրություն չեն կարող ներկայացնել: Ցուցակում տեղ չեն գտել նաև այն անունները, որոնք հավելվածի տված ձևով գործածվում են նաև ասորերենում (Adnerseh, Abgar, Ardašir, Manazgerd, Theodoros և այլն), քանի որ նրանք չեն կարող կովաճանդիսանալ համապատասխան հայերեն տառերի հնչյունական արժեքը որոշելու գործում: Չեն նշված ևս մի շարք խիստ աղավաղված բառեր, որոնց ցանկացած վերականգնում կարող է կասկածելի լինել:

Սակայն նախքան բառերի թվարկմանն անցնելը հարկ ենք համարում տալ ասորերեն գրերի սույն հոդվածում գործածվող լատիներեն տառադարձությունը, որը տարբերվում է սեմական լեզվագիտության մեջ ընդունված տառադարձությունից: Փոփոխությունները կատարված են ասորական աղբյուրների նյութերը հայագետներին առավել ճշտությամբ ներկայացնելու նպատակով: Դավերաբերում է հատկապես այն դեպքերին, երբ ասորերենի հնչույթային համակարգի սահմանափակության պատճառով այբուբենի միևնույն տառը արտահայտում է հայերենի մի քանի հնչույթ:

'ālaf ¹⁴	— a, e	lamad	— l
bēt	— b, v	mīm	— m
gāmal	— g, ġ, ɣ	nūn	— n
dālad	— d	semkat	— s, ʃ
hē	— h	'e	— ' (ʾ)
waw	— o, u	pē	— p, ph
zain	— z, j	šadē ¹⁵	— ʃ
hēt	— x	qōf	— k
ṭet	— t	rēš	— r
iod	— j, i, e	sīn	— s, c
kāf	— kh	taw	— th

Քանի որ ասորերենում կարճ ձայնավորները գրությամբ չեն արտահայտվում, ապա ստիպված ենք դրանք վերականգնել ըստ բառերի հայերեն արտասանության, օրինակ՝ գրված է mndguni, smbd, տառադարձել ենք mandaguni, smbad և այլն¹⁶: Ընդ որում ձայնավորների երկարությունը չենք նշել, որովհետև դա հայերենի համար նշանակություն չունի:

Լեզվաբաններին վստահելի նյութ տրամադրելու համար բառերին կցել ենք համառոտ ծանոթագրություններ, որոնց անհրաժեշտությունը զգացվում է այն պատճառով, որ հաճախ հայերեն անունները ասորերենում գրեթե անձանաչելիության աստիճանի ձևափոխվել են:

¹⁴ Բառասկզբում օ-ից և ա-ից առաջ չենք նշում:

¹⁵ Տառադարձության մեջ օգտագործված չէ:

¹⁶ Այդ իսկ պատճառով ասորական աղբյուրներում հիշատակվող հայկական անունները չեն կարող ծառայություն մատուցել միջին հայերենի ձայնավորների ուսումնասիրման գործում:

1 Agoph—Յակոբ Սարերացի, Արդիշո ասորու եպիսկոպոս ձեռնադրվելու առթիվ, մոտ 549 թ. Ներսես Բ Հայոց կաթողիկոսի մոտ ուղարկված ասորական պատգամավորության անդամներից [էջ 772]¹⁷:

2 Ayci— Աղցի (սեռ. Աղցից), գյուղ Արագածոտն գավառում [էջ 774]:

3 Alapheriz—Ալաբերի (սեռ. Ալաբերից), գյուղ Կոտայք գավառում [էջ 774]:

4 Aphlaphas—Արլաբաս Սմբատ, Հայաստանի իշխան, 826—850 թթ.: Մի անգամ էլ հիշատակված է Ablahas ձևով [էջ 774]:

5 Apahunı—Ապահունի Անան, Աբգար թագավորի կողմից Քրիստոսի մոտ ուղարկված անձը, որին այս ազգանունը վերագրված է սխալմամբ: Երկրորդ անգամ հիշատակված է pahuni ձևով [էջ 770]:

6 Aphraham—Աբրահամ Ա Աղբաթանցի, կաթողիկոս Հայոց, 607, 615 թթ. [էջ 770]: Երեք անգամ էլ հիշատակված է Abraham ձևով [էջ 773, 774]:

7 Aphthiso — ա) Արդիշոյ, ասորի եպիսկոպոս, ձեռնադրված Ներսես Բ Հայոց կաթողիկոսի կողմից մոտ 549 թ., մասնակցել է 554 թ. Դվինի ժողովին [էջ 772]: Մի անգամ էլ հիշատակված է Abdiš ձևով [էջ 773]: բ) Aphthisa¹⁸ — Բրիշոյ ասորի, կաթողիկոս Հայոց, 432 թ. [էջ 772]:

8 Ardavasd—Արտավազդ Ա, Հայոց թագավոր, մ. թ. ա. 160—95 թթ. միջև [էջ 770]: Մի անգամ հիշատակված է Artavasth ձևով [էջ 774]:

9 Ardašes — ա) Արտաշես Ա, Հայոց թագավոր, մ. թ. ա. 189—160 թթ. [էջ 774]: Չորս անգամ հիշատակված է Aršug ձևով [էջ 770]: բ) Արտաշես, Հայոց թագավոր, 422—428 թթ. [էջ 774]: Երկու անգամ էլ հիշատակված է Ardašiš և Ardašir ձևերով [էջ 772]:

10 Ardaz¹⁹—Արտազ, գավառ [էջ 770]:

11 Arjuxe—Արծկէ, ավան [էջ 774]:

12 Arkhejavos — Արեղայոս, Չորրորդ Հայքի վերակացու, որն սպանեց Արիստակես Ա Հայոց կաթողիկոսին (325—333): Ասորական տառադարձությունը ծագում է հայերեն մի այլ ընթերցվածից՝ Արեղալոս²⁰ [էջ 771]:

13 Aršag — ա) Արշակ Բ, Հայոց թագավոր, 345/50—367/8 թթ.: Հիշատակված է յոթ անգամ [էջ 771, 774]: բ) Արշակ Գ, Հայոց թագավոր, 378—389 թթ. [էջ 772, 774]:

14 Arsaguni — ա) Արշակունի Երվանդ, Հայոց թագավոր, մոտ մ. թ. ա. 220—201 թթ., ըստ ավանդության՝ ծնված Արշակունի մորից²¹ [էջ 770]: բ) Արշակունի Վարազդատ, Հայոց թագավոր, 374—378 թթ. [էջ 771]: գ) Արշակունի Խոսրով, Հայոց թագավոր, 385—387/8 թթ. [էջ 772]:

15 Arthenšahbuh — Դենշապուն, Հայաստանի պարսիկ մարզպան, 548—558 թթ. միջև [էջ 773]: Մի անգամ էլ հանդիպում է Arthensabu ձևով [էջ 774]:

17 Հմմտ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 53:

18 Ձեռագրում՝ Aphthi'a, որն առաջացել է ասորերեն 'e և šln տառերի շփոթությունից:

19 Ձեռագրում՝ Adra, որն առաջացել է ասորերեն reš և dālad, 'āla' և zālū տառերի նմանության պատճառով:

20 «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան և Ս. Յարութիւնեան», Տփղիս, 1913, էջ 243:

21 Նույն տեղում, էջ 161:

16 Ašdišai d! — Աշտիշատ, բաղաբ [էջ 772]:

17 Aspurages — Ասպուրակէս Ա Մանաղկերտցի, կաթողիկոս Հայոց, 381—386 թթ. [էջ 770]: Երկրորդ անգամ հիշատակված է Asipurag ձևով [էջ 771]:

18 Ašod — ա) Աշոտ Բաղրատունի, Հայաստանի իշխան, 686—690 թթ. [էջ 773, 774]: բ) Աշոտ Բաղրատունի, Հայաստանի իշխան, 732—750 թթ. և 761 թ.: Հիշատակված է Երեբ անգամ [էջ 773, 774]: գ) Աշոտ Մսակեր, Հայաստանի իշխան, 806/7—825/6 թթ.: Հիշատակված է Երկու անգամ [էջ 774]: դ) Աշոտ Ա, Հայոց թագավոր, 887—890/1 թթ.: Հիշատակված է Երեբ անգամ [էջ 774]: ե) Աշոտ Շապուհյան, թպարապետ, Աշոտ Երկաթի հորեղբորորդին, Հայոց թագի հավակնորդ, X դարի առաջին բառորդ [էջ 774]:

19 Athanakhine — Աթանաքինէ, Ներսես Ա Հայոց կաթողիկոսի (353—373) հայրը [էջ 771]:

20 Azad — Ազատ, գետ [էջ 771]:

21 Bab — Պապ, Հայոց թագավոր, 368—374 թթ.: Հիշատակված է ինն անգամ [էջ 771, 772, 774]:

22 Badrig — Բադրիկ Գրիգոր Մամիկոնյան, Հայաստանի իշխան, 662—685 թթ. [էջ 774]: Մի անգամ էլ հիշատակված է bardig ձևով [էջ 773]:

23 Balhav²² — Պախլա, Սահակ Պարթև Հայոց կաթողիկոսի (387—439) ազգանունը [էջ 770]:

24 Barbušij — Ապուսան Յուսուփ, Ատրպատականի ամիրա, 901—928 թթ. [էջ 774]:

25 Barsigs — Կարսիկս (հայկաբանություն է՝ Կարսիկ բառի հայցականը): Հիշատակված է այն առթիվ, որ Կարսիկները Տրդատ Գ-ի թագավորությունից առաջ (298—330) 26 տարի տիրեցին Հայաստանին [էջ 774]:

26 Beroz — Պերոզ, պարսից արքա, 459—484 թթ. [էջ 773]:

27 Betheskh — Բեթշի Վարդան Մամիկոնյան, 572 թ. ապստամբության ղեկավարը [էջ 773]:

28 Dignac digin — տիկնաց տիկին, հայերեն բառեր, որոնք Միքայելի «Ժամանակագրությունը» ներկայացնում է որպես հատուկ անուն այն Հայոց թագուհու, որի հալածանքին է ենթարկվել Վրթանես Ա Հայոց կաթողիկոսը (333—341), [էջ 771]:

29 Dikhran — Տիգրան Բ, Հայոց թագավոր, մ. թ. ա. 95—55 թթ. [էջ 771, 774]:

30 Diragaci — Տիրակացի Փիլոն, Սոկրատ Սքուստիկոսի «Եկեղեցական պատմության» հայ թարգմանիչը, VII դարի առաջին կես [էջ 773]:

31 Diran — ա) Տիրան, Հայոց թագավոր, 338—345 (350) թթ.: Հիշատակված է չորս անգամ [էջ 771, 774]: բ) Տիգրան Ա, Հայոց թագավոր, մ. թ. ա. 160—95 թթ. միջև: Հիշատակված է Երկու անգամ, առաջին դեպքում՝ Tirad ձևով [էջ 771, 774]:

32 Drthad — ա) Տրդատ Գ, Հայոց թագավոր, 298—330 թթ.: Երկու անգամ հիշատակված է նշված ձևով, մեկական անգամ էլ՝ Trtat և Drtat [էջ 771, 774]: բ) Տրդատ Ա Ոթմսեցի, կաթողիկոս Հայոց, 741—764 թթ.

²² Պախլաունի > Պախլաունի գրափոխությունը նկատված է նաև հայկական աղբյուրներում, տե՛ս Ակնարկներ, էջ 163:

[էջ 770, 773]: գ) Srgham Բ Դասնավորցի, կաթողիկոս Հայոց, 764—767 թթ. [էջ 773]:

33 Ezechig—եղեգիկ, գյուղ Հարք գավառում [էջ 774]:

34 Eria — եղիա Ա Արճեշցի, կաթողիկոս Հայոց, 703—717 թթ. [էջ 770]: Երկրորդ անգամ հիշատակված է Elia ձևով [էջ 773]:

35 Ervand—երուանդ. տե՛ս 14—ա՝ Aršaguni. Հիշատակված է հինգ անգամ [էջ 770]:

36 Gabuid — Կապոյտ, բերդ, որտեղ 913/4 թ. ապաստանեց Սմբատ Ա Հայոց թագավորը, փախչելով Ատրպատականի Յուսուփ ամիրայի հալածանքից²³ [էջ 774]:

37 Gamsaragan — ա) Կամսարական ներսես, Շիրակի իշխան, կիրապաղատ, 689—691 թթ. [էջ 773]: Մի անգամ էլ հիշատակված է Gamsarag ձևով [էջ 774]: բ) Gamsaraganaç—[յազդէն] Կամսարականաց ձևով հիշատակված է այն առթիվ, որ Աշոտ Մսակեր Հայոց իշխանը (806/7—825/6 թթ.) Կամսարականներից գնել է Արշարունիս գավառը²⁴ [էջ 774]:

38 Garno khaçakh — Կարնոյ քաղաք, նույնն է՝ Կարին [էջ 771, 773]:

39 Gavad—Կաւաւ Ա, պարսից արքա, 488—531 թթ.: Հիշատակված է երկու անգամ [էջ 773]:

40 Gokovit—Կոգովիտ, գավառ [էջ 774]:

41 Gomidas—Կոմիտաս Ա Աղցեցի, կաթողիկոս Հայոց, 615—628 թթ. [էջ 770, 773, 774]:

42 Gurabaçad—կիրապաղատ Համազասպ Մամիկոնյան, 657/8—661 թթ. [էջ 773]: Եվս մի անգամ հիշատակված է guraḡaç ձևով [էջ 774]:

43 Hacegac—Հացեկաց, գյուղ Տարոնում [էջ 772]:

44 Hriphsime—Հոփսիմէ, հիշատակված է նրան նվիրված տաճարի կառուցման առթիվ, երկրորդ անգամ՝ Hrophsime ձևով [էջ 773, 774]:

45 Khaçkh — Քաչք, Արտավազդ Ա Հայոց թագավորին (մ. թ. ա. 160—95 թթ. միջև) Մասսի գազաթին շղթայող հսկաները²⁵ [էջ 770]:

46 Khaçakh Khozan²⁶ — Խոզան քաղաք՝ Չորրորդ Հայքում [էջ 771]:

47 Khakhig—Գաղիկ Արծրունի, Վասպուրականի թագավոր, 904—937 թթ. [էջ 774]:

48 Kheçam — Գեղամա լեռներ [էջ 771]:

49 Kheorkh — ա) Գէորգ Ա Օշականցի, կաթողիկոս Հայոց, 792—795 թթ. [էջ 773]: բ) Գէորգ Բ Գառնեցի, կաթողիկոս Հայոց, 877—898 թթ. [էջ 774]:

50 Kherthoçahajr — Քերթոզահայր, Մովսես Խորենացու մականունը [էջ 771, 772]:

51 Khid—Գիւտ Ա Արահեզցի, կաթողիկոս Հայոց, 461—471 թթ. [էջ 772]: Մի անգամ էլ հիշատակված է Khit ձևով [էջ 770]:

52 Khnel—Գնէլ, Արշակ Բ Հայոց թագավորի եղբորորդին [էջ 771]:

23 Հմմտ. յամուրն Կապուտայ, «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 165:

24 Հմմտ. նույն տեղում, էջ 106:

25 Հմմտ. Խորենացի, էջ 192: Միրայիկի «Ժամանակագրության» ձեռագրում քաչք.ը աղավաղված է՝ khašir:

26 Ձեռագրում՝ Khakhag Khoizan.

53 Khnuni—Դնունի Մծեծ, Հայաստանի մարզպան, 517—548 թթ. [էջ 772, 773, 774]:

54 Khrikhor— ա) Դրիգոր Լուսավորիչ, մահ. 325 թ. [էջ 770]: եվս երկու անգամ հիշատակված է Grigorios ձևով [էջ 771]: բ) Դրիգոր Մամիկոնյան, տե՛ս 22՝ Badrig [էջ 773, 774]:

55 Kiuron—Կիրիոն, կաթողիկոս վրաց (VII դար): Հիշատակված է երկու անգամ, երկրորդ դեպքում՝ Kurion ձևով [էջ 773, 774]:

56 Koda[1]s—Կոտայի (հայց. Կոտայս), գավառ [էջ 774]:

57 Mambre—Մամբրէ Վերծանող, V դարի հայ մատենագիր [էջ 772]:

58 Mamigon— ա) Մամիկոն[եան] Վարդան, սպարապետ Հայոց, մահ. 451 թ. [էջ 772]: բ) Մամիկոն[եան] Համադասպ, տե՛ս 42՝ Gurabayad [էջ 773]:

59 Mamunig—Մամունիկ, ըստ Ասողկի՝ Հայաստանի ամիրա, որը Հայաստան է եկել Հովհաննես Դ Ովայեցի Հայոց կաթողիկոսի (833—855) օրոք²⁷ [էջ 773]:

60 Mandaguni—Մանդակունի Հովհան, կաթողիկոս Հայոց, 478—490 թթ. [էջ 770, 772]: երկրորդ անգամ նշված է manguni ձևով:

61 Mankhnos—Մանգնոս, Փոքր Հայքի կառավարիչ, 461—480 թթ.²⁸ [էջ 772, 774]: Առաջին անգամ հիշատակված է Mankhanos ձևով:

62 Mašdoz —Մաշտոց Ա եղիվարդեցի, կաթողիկոս Հայոց, 898—899 թթ. [էջ 774]:

63 Msager—Մսակեր, տե՛ս 18—գ՝ Ašod: Հիշատակված է երկու անգամ [էջ 774]:

64 Neršabuh —Ներշապուհ Մամիկոնյան, 554 թ. Դվինի ժողովի մասնակից [էջ 772]:

65 Nig— Նիգ, գավառ [էջ 774]:

66 Ovaph—Յավափ Ա, կաթողիկոս Հայոց, 790—791 թթ. [էջ 773]:

67 Phakhraduni— ա) Բագրատունի Սմբատ, Արտաշես Ա Հայոց թագավորի (մ. թ. ա. 189—160) դայակը [էջ 770]: բ) Բագրատունի Աշոտ, տե՛ս 18—ա՝ Ašod [էջ 773, 774]: գ) Բագրատունի Սմբատ, Հայաստանի իշխան, 691—702 (՝) թթ. [էջ 773, 774]: դ) Բագրատունի Աշոտ, տե՛ս 18—բ՝ Ašod [էջ 773, 774]:

68 Phakhrevant—Բաքրևանդ, գավառ [էջ 774]:

69 Phaphkhen—Բափգէն Ա Ոթմսեցի, կաթողիկոս Հայոց, 490—515 թթ. [էջ 770, 772]:

70 Pharanjem²⁹—Փառանձեմ, Հայոց թագուհի, Արշակ Բ-ի կինը [էջ 771]:

71 Phlur—Քլուր, Դվին քաղաքի անվանման ստուգաբանությունը, որը գալիս է, ըստ երևույթին, հորենացուց³⁰ [էջ 771]:

72 Pheznun—Քֆնուն[իք], գավառ [էջ 774]:

27 Հմմտ. Ասողիկ, էջ 106: Սակայն, ըստ երևույթին, այս անունը շփոթված է արաբական խալիֆ Մամունի անվան հետ:

28 Հմմտ. Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 561:

29 Չեռագրում՝ Pharnajem.

30 Հմմտ. հորենացի, էջ 265: Ասորական բնագրում՝ Phlar:

73 Phokhr—Փոփր հոսորով, Հայոց թագավոր, 330—338 թթ. [էջ 774]:

74 Rstakhes—Ռստակէս (Արիստակէս) Ա, կաթողիկոս Հայոց, 325—333 թթ.: Նշված է երկու անգամ, երկրորդ դեպքում՝ Rsdakhes ձևով [էջ 770, 771]:

75 Ršduni — ա) Ռշտունի Թեոդորոս, Հայաստանի իշխան, մահ. 658 թ.: Հիշատակված է երեք անգամ, առաջին երկու դեպքում՝ Ršldbni³¹ ձևով [էջ 773, 774]: բ) Rjdunia[c] — Ռշտունիք (սեռ. Ռշտունեաց), դավառ [էջ 774]: Ասորական տառադարձության տարօրինակությունը պետք է բացատրել հայերեն շ և չ տառերի նմանությունով:

76 Šabuh — Շապուհ, Աշոտ Երկաթի հորեղբայրը [էջ 774]:

77 Sahag — ա) Սահակ Ա Պարթև, կաթողիկոս Հայոց, 387—439 թթ., հիշատակված է յոթ անգամ [էջ 770, 772]: բ) Սահակ Բ Ուղկացի, կաթողիկոս Հայոց, 534—539 թթ. [էջ 770, 772]: Մի անգամ էլ հիշատակված է Isxak ասորականին մոտ ձևով [էջ 774]: գ) Սահակ Գ Զորափորեցի, կաթողիկոս Հայոց, 677—703 թթ. [էջ 770, 773]: դ) Շահակ Ա. Մանազկերտցի, կաթողիկոս Հայոց, 373—377 թթ. [էջ 770, 771]:

78 Sanadrug — Սանատրուկ Ա (Արշակ Ա), Հայոց թագավոր, 34—35 թթ.: Հիշատակված է յոթ անգամ, որից վեցը՝ Sanatrug ձևով [էջ 770, 774]:

79 Sarkhis — Սարգիս, Աբդիշո ասորու եպիսկոպոս ձեռնադրվելու առթիվ մոտ 549 թ. Ներսես Բ Հայոց կաթողիկոսի մոտ ուղարկված ասորական պատգամավորության անդամներից³² [էջ 772]:

80 Sharabed — սպարապետ Վարդան Մամիկոնյան, տե՛ս 58 — ա՝ Marmigon [էջ 772]:

81 Sdephanos — Ստեփանոս Ա Դվինցի, կաթողիկոս Հայոց, 788—790 թթ. [էջ 773]:

82 S[in]çeṙevan — Սինձեղևան, գյուղ Գաբեղյան գավառում [էջ 774]:

83 Širagaci — Շիրակացի Անանիա (VII դար), [էջ 773]:

84 Siunlaç — Սիւնեաց Պետրոս եպիսկոպոս, 554 թ. Դվինի ժողովի մասնակից [էջ 772]:

85 Smbad — ա) Սմբատ Բագրատունի, տե՛ս 67 — ա՝ Phakhraduni, հիշատակված է երկու անգամ [էջ 770]: բ) Սմբատ Բագրատունի, տե՛ս 67 — գ՝ Phakhraduni [էջ 773, 774]: գ) Սմբատ Բագրատունի, Հայաստանի իշխան, 761 (°) — 775 թթ.: Հիշատակված է երեք անգամ [էջ 773, 774]: դ) Սմբատ Արլաբաս, տե՛ս 4՝ Aphlaphas, հիշատակված է երկու անգամ [էջ 774]: ե) Սմբատ Ա, Հայոց թագավոր, 890/1—913/4 թթ., հիշատակված է վեց անգամ [էջ 774]:

86 Surmag — Սուրմակ Մանաղկերտցի, կաթողիկոս Հայոց, 428, 437 թթ. [էջ 770, 772]:

87 Thareš — Դարեհ, պարսից արքա, որի մոտ, ըստ ավանդության, ապաստանեց Սմբատ Բագրատունին՝ Արտաշես մանուկին Երվանդի հալածանքից փրկելու ժամանակ³³ [էջ 770]:

³¹ Այդ ձևն, ըստ երևույթին, առաջացել է արաբերեն Rasid անվան աղղեցությունով, իսկ ասորերեն 𐭪𐭥𐭣 տառը, կորցնելով շրջագծի ձախակողմը, նմանվել է ԾԵԼ-ի:

³² Հմմտ. Ռ. Գիրբ. թղթոց, էջ 54:

³³ Հմմտ. Խոսրեհայի, էջ 163:

88 Thatheos—Թադէոս առաքյալ, հիշատակված է երկու անգամ [էջ 770]:

89 Thavith— ա) Դավիթ Անհաղթ, V դարի իմաստասեր [էջ 772]: բ) Դավիթ վանից երեց Խափայի, Աբդիշո ասորու եպիսկոպոս ձեռնադրվելու առթիվ մոտ 549 թ. ներսես Բ Հայոց կաթողիկոսի մոտ ուղարկված ասորական պատգամավորության անդամներից³⁴ [էջ 772]: գ) Դավիթ վանից երեց Փարթնայի, նույն պատգամավորության անդամներից³⁵ [էջ 772]: դ) Դավիթ Սահառունի, Արևմտյան Հայաստանի կիրապաղատ, 635—638 թթ.: Հիշատակված է երկու անգամ, երկրորդ դեպքում՝ Davith ձևով [էջ 773]: ե) Դավիթ Ա Արամոնեցի, կաթողիկոս Հայոց, 728—741 թթ. [էջ 770, 773]: զ) Դավիթ Բ Կակաղացի, կաթողիկոս Հայոց, 806—833 թթ. [էջ 773]:

90 Thvin—Դուին, քաղաք [էջ 771, 772]:

91 Usig—Յուսիկ Ա, կաթողիկոս Հայոց, 341—347 թթ., հիշատակված է երեք անգամ [էջ 770, 771]:

92 Vayars —Վադարշ Բ, Հայոց թագավոր, 186—198 թթ. [էջ 771, 774]:

93 Vayarsag —Վադարշակ, Արշակ Գ Հայոց թագավորի (378—389) եղբայրը [էջ 772, 774]:

94 Varasthad— ա) Վարազդատ, Հայոց թագավոր, 374—378 թթ.: Հիշատակված է երեք անգամ՝ Varasthad, Varazthan և Varazdad ձևերով [էջ 771, 774]: բ) Վարազդատ, Հայաստանի պարսիկ մարզպան, 558—564 թթ. միջև³⁶, Հիշատակված է երկու անգամ՝ Varazthad և Varazbad ձևերով [էջ 773, 774]:

95 Varth—Վարդ Մամիկոնյան, Հայաստանի մարզպան, 505—509 թթ. [էջ 772, 774]:

96 Varthan— ա) Վարդան Մամիկոնյան, տե՛ս 58—ա՝ Mamigon: Հիշատակված է հինգ անգամ [էջ 772, 774]: բ) Վարդան Մամիկոնյան, տե՛ս 27՝ Betheškh [էջ 773]:

97 Vasag—Վասակ, Հայոց իշխան Աշոտ Բագրատունու (732—750 և 761) հայրը [էջ 773]:

98 Vasburagan—Վասպուրական, նահանգ [էջ 774]:

99 Ve[r]janoy —Վերձանող Մամբրե, տե՛ս 57՝ Mambre [էջ 772]:

100 Virab—Վիրապ, Գրիգոր Լուսավորչի ընդգետնյա ապաստանը [էջ 771]:

101 Vramšabuh — ա) Վրամշապուհ, Հայոց թագավոր, 387/8—413/4 թթ., հիշատակված է երեք անգամ [էջ 772, 774]: բ) Վրամ Ե Գոռ, պարսից արքա, 420—438 թթ. [էջ 772]:

102 Vrthanes—Վրթանէս Ա, կաթողիկոս Հայոց, 333—341 թթ., հիշատակված է չորս անգամ [էջ 770, 771]:

Ինչպես տեսնում ենք, նշված բառերի տառադարձությունը էապես շեղվում է դասական գրաբարի ուղղագրությունից, հանդես բերելով մի շարք օրինաչափություններ: Ընդ որում, այդ տառադարձության արժանահավատությունը հաստատվում է այն կարևոր հանգամանքով, որ նույն օրինաչափություններն

³⁴ Հմմտ. «Գիրք թղթոց», էջ 53:

³⁵ Նույն տեղում, էջ 54:

³⁶ Հմմտ. Ա ի շ ա ն, Այրարատ, էջ 561:

են դիտվում նաև Միքայել Ասորու «Ժամանակագրության» այն հատվածներում, որտեղ հեղինակը իր պատմությունը շարադրում է որպես ականատես և ականջալուր: Նա բավականին հանգամանալից կերպով անդրադառնում է Կիլիկյան Հայաստանի անցուդարձերին և հիշատակում բազմաթիվ անուններ: Այստեղ Միքայել Ասորու աշխատությանը միանում են ևս երեք ասորական աղբյուրներ՝ XIII դարի պատմիչ Բար-Հեբրեյի «Նկեղեցական»³⁷ և «Ասորական»³⁸ ժամանակագրությունները, ինչպես նաև նույն XIII դարի «Անանուն ժամանակագրությունը»³⁹: Վերջիններս նույնպես մեծ տեղ են հատկացնում Կիլիկյան Հայաստանի իրադարձություններին և նույնպես նշում մի շարք անուններ: Այս բոլոր աղբյուրներն էլ առաջնորդվում են տառադարձական միևնույն սկզբունքներով, մի հանգամանք, որ խոսում է այդ տառադարձության ոչ պատահական լինելու մասին: Ստորև բերվում են Կիլիկիայի պատմությանն առնչվող՝ Միքայել Ասորու հիշատակած անձնանուններն ու տեղանունները, նշելով նաև ասորական մյուս աղբյուրների տվյալները: Այստեղ նույնպես քնդգրկված են այն բառերը, որոնցում դրսևորված են կամ պետք է դրսևորված լինեին միջին հայերենի հնչյունաբանության կրած փոփոխությունները: Նույն շարքում նշում ենք նաև ասորական աղբյուրների կողմից հիշատակվող որոշ հայկական անուններ, որոնք թեև առնչություն չունեն Կիլիկյան Հայաստանի հետ, բայց վերաբերում են նույն ժամանակաշրջանի պատմությունը:

103 Abirad—Ապիրատ, Գրիգոր Զ, կաթողիկոս Հայոց, 1194—1203 թթ. [էջ 738]: Մի անգամ հիշատակված է նաև Բար-Հեբրեյի «Նկեղեցական ժամանակագրության» և երկու անգամ՝ XIII դարի «Անանուն ժամանակագրության» մեջ⁴⁰:

104 Aṣvan—Ազվան, աշխարհ⁴¹:

105 Aṣthamar—Աղթամար, կղզի⁴²:

106 Arješ—Արեշ, քաղաք⁴³:

107 Dṣa—Տղա Վասիլ, Քեսունի տերը, 1112—1116 (°) թթ. [էջ 595]: Իրկու անգամ էլ հիշատակված է Բար-Հեբրեյի մոտ⁴⁴:

108 Diraçu—Տիրացու, Գրիգոր Ե Քարավեժ Հայոց կաթողիկոսի (1193—1194) մականունը [էջ 737]: Եվս մի անգամ հիշատակում է Բար-Հեբրեյը⁴⁵:

109 Divrige—Տիւրիկէ, ավան [էջ 651]:

110 Gabnupherth⁴⁶—Կապան՝ բերդ Կիլիկիայում [էջ 622]: Մի անգամ էլ հիշատակված է Բար-Հեբրեյի մոտ⁴⁷:

³⁷ Barhebraeus, *Chronicon ecclesiasticum*, ed. J.-B. Abbeloos, Th. J. Lamy, t. I—III, Lowen, 1872—1877.

³⁸ „Gregorii Barhebraei Chronicon syriacum, ed. P. Bedjan“, Parisiis, 1890.

³⁹ „Anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinens“, vol. II, ed. J.-B. Chabot, „Corpus scriptorum christianorum orientalium, scriptores syri, series tertia“, t. XV, Parisiis, 1916.

⁴⁰ Barhebr., *Chr. Eccl.*, t. I, էջ 599. *Chr. Anon.*, էջ 327, 341.

⁴¹ Barhebr., *Chr. Eccl.*, t. I, էջ 535.

⁴² Նույն տեղում, էջ 533:

⁴³ Barhebr., *Chr. Syr.*, էջ 423.

⁴⁴ Նույն տեղում, էջ 279, 297:

⁴⁵ Barhebr., *Chr. Eccl.*, t. I, էջ 597.

⁴⁶ Չեռագրում՝ Ganbupherth.

⁴⁷ Barhebr., *Chr. Syr.*, էջ 303.

111 Garabed— ա) Կարապետ, քահանա, ներսես Շնորհալու դեմ ընդ-
վրդած հուսիկյան խմբից, տե՛ս 124՝ Usig [էջ 703]։ բ) Կարապետ, Մշո (°)
Ս. Կարապետ եկեղեցին [էջ 733]։

112 Gobidara—Կուպիտառ, ամրոց Կիլիկիայում [էջ 738]։ Մի անգամ
էլ հիշատակված է Բար-Հեբրեյի մոտ⁴⁸։

113 Gostandin—Կոստանդին Ա, Կիլիկիայի իշխան, 1095—1100 թթ.⁴⁹։
Մի քանի անգամ էլ բոլոր երեք աղբյուրներում հիշատակված է Kostantin
ասորականացված ձևով [հմմտ. էջ 594, 595]։

114 Jabakhçur — ձապաղչուր, բերդաքաղաք Չորրորդ Հայքում [էջ 736]։

115 Jov—Յով[բ], ամրոց Կիլիկիայում [էջ 651]։

116 Kheorkh—Վորգ, քահանա, ներսես Շնորհալու դեմ ընդվզած հու-
սիկյան խմբից, տե՛ս 124՝ Usig [էջ 703]։

117 Khoç — Գուլ Վասիլ, Քեսունի տերը, 1082—1112 թթ.։ Չորս անգամ
հիշատակված է Միքայելի [էջ 589, 595], չորս անգամ էլ Բար-Հեբրեյի մոտ⁵⁰։

118 Khrikhor—Գրիգոր, ասորական աղբյուրները նշում են այս անունը
կրող մի շարք անձնավորություններ՝ Գրիգոր Գ Պահլավունի (1113—1166),
Գրիգոր Դ Տղա (1173—1193), Գրիգոր Ե Քարավեժ (1193—1194), Գրիգոր Զ
Ապիրատ (1194—1203) Հայոց կաթողիկոսներ։ Հիշատակվում է Khrikhor,
Khrikhoros, Khrikhoris, Khrikhorios ձևերով՝ Միքայելի մոտ տաս ան-
գամ [էջ 596, 626, 651, 706, 728, 737, 738], Բար-Հեբրեյի մոտ՝ չորս⁵¹,
«Անանուն ժամանակագրության» մեջ՝ երեք⁵²։

119 Mlex—Մլեհ, Կիլիկիայի իշխան, 1169—1174 թթ.։ Հիշատակված է
չորս անգամ Միքայելի մոտ [էջ 705, 709, 710], երեք անգամ Բար-Հեբրեյի
մոտ և չորս անգամ «Անանուն ժամանակագրության» մեջ⁵³։

120 Ruphen—Ռուբէն, այս անվան տակ հանդես են գալիս՝ Ռուբեն Ա
(1080—1095) և Ռուբեն Բ (1174—1185) Կիլիկյան իշխանները, Ռուբեն եղ-
բորորդի Մլեհի (1169—1174), Ռուբեն որդի Բոհեմունդի (Անտիոքի պրինց)։
Հիշատակված է Միքայելի մոտ՝ ինն անգամ [էջ 589, 595, 711, 719, 730,
739], Բար-Հեբրեյի մոտ՝ տասներեք անգամ, «Անանուն ժամանակագրու-
թյան» մեջ՝ չորս անգամ⁵⁴։

121 Stephane—Ստեփանէ, Կիլիկիայի Թորոս Ա իշխանի եղբայրը [էջ
711]։ Հինգ անգամ էլ Estephane ձևով հիշատակված է Բար-Հեբրեյի մոտ⁵⁵։

122 Thoros—Թորոս Բ, Կիլիկիայի իշխան, 1144—1163 թթ.։ Հիշատակ-
ված է Միքայելի մոտ՝ յոթ անգամ [էջ 640, 641, 653], Բար-Հեբրեյի մոտ՝
տասնհինգ, «Անանուն ժամանակագրության» մեջ՝ երեք⁵⁶։

⁴⁸ Barhebr., Chr. Eccl., t. I, էջ 599.

⁴⁹ Chr. Anon., էջ 67.

⁵⁰ Barhebr., Chr. Syr., էջ 279.

⁵¹ Barhebr., Chr. Eccl., t. I, էջ 485, 595, 597. Chr. Syr., էջ 279.

⁵² Chr. Anon., էջ 177, 307, 326.

⁵³ Barhebr., Chr. Syr., էջ 331, 350; Chr. Anon., էջ 176, 177.

⁵⁴ Barhebr., Chr. Syr., էջ 279, 350, 356, 398, 430, 442, 443; Chr. Anon., էջ 60,
101, 177.

⁵⁵ Barhebr., Chr. Syr., էջ 324, 325, 328, 350, 385.

⁵⁶ Chr. Anon., էջ 161; Barhebr., Chr. Syr., էջ 313, 323—326, 328—331. Երկու
անգամ էլ հիշատակված է Թորոս Ա (1100—1123), էջ 286, 289.

123 Thrazarg—Գրազարկ, վանք Կիլիկիայում⁵⁷;

124 Usig— ա) Յուսիկ, վաներեց, ներսես Շնորհալու դեմ ընդվզած և հետագայում ճղեսիայում հունադավանություն ընդունած խմբի ղեկավարը⁵⁸ [էջ 703]; բ) Usigonia—Յուսիկեանք, նախորդի կողմնակիցների անվանումը, հիշատակված երկու անգամ [էջ 704];

125 Vahgai—Վահկայ, ամրոց Կիլիկիայում [էջ 622];

126 Varthabethe—Վարդապետք, հուսիկյաններին հարող եղեսացի հայ վարդապետներ, տե՛ս 124՝ Usig [էջ 703];

127 Xethum—Հեթում Բ, Կիլիկիայի թագավոր, 1289—1301 թթ.։ Հիշատակված է չորս անգամ Բար-Հեթերեյի «Ասորական ժամանակագրության» շարունակության մեջ⁵⁹։ Հետաքրքիր է, որ նույնպես չորս անգամ հիշվող Հեթում Ա-ի (1224—1261) անունը տառադարձված է Hethum ձևով⁶⁰։

128 Zabel—Չապել, լեռն Բ Կիլիկյան թագավորի (1185—1219) դուստրը⁶¹։

Այս տառադարձության օրինաչափության մասին է վկայում ևս մի կարևոր հանգամանք։ Միքայել Ասորին իր մեծածավալ աշխատության էջերում հաճախ է անդրադառնում նաև Հայաստանի հին շրջանի պատմությանը, տեղեկություններ քաղելով ասորական հնագույն աղբյուրներից՝ պատմագրությունից, ժողովների արձանագրություններից, թղթերից և այլն։ Այս հատվածներում հիշատակվող հայկական անունների տառադարձությունը, ընչին բացառությամբ, լիովին համապատասխանում է գրաբարի դասական շրջանի ուղղագրությանը։ Այսպես, օրինակ՝ Մանազկերտի 726 թ. հայ-ասորական ժողովի մասին խոսելիս, Միքայել Ասորին արտագրելով ժողովի արձանագրությունը, հիշատակում է հայ անձնավորություններին վերաբերող հետևյալ անունները⁶². Sargis — Սարգիս (2 անգամ), Grigorios կամ Grigor — Գրիգոր (3 անգամ), Habel — Հաբել, [A]matunis — Ամատունիս, Rštunis — Ռշտունիս, Vanand — Վանանդ, Golthn⁶³ — Գոլթն, Gn[u]nis — Գնունիս, Georg — Գեորգ, Bakratunis — Բագրատունիս, Bag[re]vand — Բագրևանդ, Taron⁶⁴ — Տարան, Sahak — Սահակ [էջ 459]։ Նույն ձևով են տառադարձված նաև Հայաստանի պատմության հին շրջանին վերաբերող մի շարք այլ անուններ, ինչպես՝ Tiran — Տիրան, Ašak — Աշակ (2 անգամ), Pap — Պապ, Valaršak⁶⁵ — Վաղարշակ [էջ 77], Grigorios — Գրիգոր խուսավորիչ [էջ 120, 123, 457], Duin — Դուին [էջ 344]։ Միայն մի երկու տեղ նկատվում են շեղումներ այդ ուղղագրությունից, այն էլ, ըստ երևույթին, պատահական, օրինակ՝ Trthad, Drtat — Տրդատ [էջ 77, 120], Orostat — Վառազդատ [էջ 77]։ Այս-

⁵⁷ Barhebr., Chr. Eccl., t. I, էջ 487.

⁵⁸ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946, էջ 734.

⁵⁹ Barhebr., Chr. Syr., էջ 594.

⁶⁰ Chr. Anon., էջ 454, 455. Barhebr., Chr. Eccl., t. I, էջ 689.

⁶¹ Barhebr., Chr. Syr., էջ 437, 443.

⁶² Նշված են միայն այն անունները, որոնք աղավաղված չեն. աղավաղվածների մասին տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցու յարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908, էջ 190—194.

⁶³ Ձևագրում՝ Goloni.

⁶⁴ Ձևագրում՝ Toroni.

⁶⁵ Ձևագրում՝ Valanšak.

պիսով, այն դեպքերում, երբ Միքայել Ասորին օգտվում է հնադույն ասորական աղբյուրներից, հայկական անունների նրա տառադարձությունը համապատասխանում է գրաբարի դասական շրջանի ուղղագրությունը: Իսկ երբ նա դրում է ժամանակակից իրադարձությունների մասին, կամ օգտագործում մի այնպիսի հայկական աղբյուր (Հայաստանի պատմությանը նվիրված հավելվածը), որի թարգմանիչն ինքն է կամ իր շրջանի մի այլ անձնավորություն, ապա նրա տառադարձությունը ամբողջովին հեռանում է գրաբարյան ուղղագրությունից: Սա նշանակում է, որ հեղինակը իր աղբյուրների նյութերը վերարտադրել է հարազատորեն, առանց խմբագրելու: Նա կարծես չի էլ ձգտում միասնականություն մտցնել թեկուզ միևնույն անունների տառադարձության մեջ: Դա, ըստ երևույթին, անհնար աշխատանք կպահանջեր, քանի որ Միքայելը չէր կարող հիշել, թե իր գրքի ինչ-որ հատվածում ինչպես է տառադարձել որևէ հայկական անուն: Անգամ համաքրիստոնեական անունները, որոնք գալիս են հայկական աղբյուրներից, նա սովորաբար տառադարձում է ըստ հայերեն արտասանության, թեև կարող էր դնել նրանց ասորերեն համարժեքը (հմմտ. 1, 49, 54, 77, 79, 88): Ավելին, կան դեպքեր, երբ Միքայելը այդպես է վարվում նույնիսկ այդ աղբյուրների ասորական ծագում ունեցող անունների հետ (Aphthišo փիւ. 'Abdišo): Միայն երբեմն հայ անձնավորությունների համաքրիստոնեական անունները նա վերարտադրում է համապատասխան ասորական ձևերով, այսպես՝ 'Eliša—

եղիշէ. 'Eša'ia —եսայի. Iausep—Յովսէփ. Šlmon—Սողոմոն և այլն: Միքայել Ասորու այս անհետևողականությունն է ահա և աղբյուրների վերարտադրման ընդգծված հարազատությունը, որ առավել վստահություն է ներշնչում գրաբարի ուղղագրությունից շեղվող նրա տառադարձության հավաստիության նկատմամբ:

Այդ տառադարձության օրինաչափությունների դասակարգումից ստացվում է հետևյալ պատկերը.

ա) Հայերենի շնչեղ-խուլերը արտահայտված են ասորերենի համապատասխան շնչեղ-խուլերով.

փ=ռհ 44, 70, 73, 81, 121:

ք=կհ 12, 38, 46, 50, 47, 73:

թ=տհ 19, 50, 88, 89, 102, 105, 122, 127:

ց=ս 2, 28, 30, 37 (բ), 43, 83, 84, 108:

չ=Շ շնչեղ-խուլը օրինակներում արտահայտված չէ:

Ցուցակում դիտվում է շնչեղ-խուլերի փոփոխման միայն երկու դեպք՝ Alapheriz—Ալլարերից (3) և Mašdoz—Մաշտոց (62), որտեղ ց-ին համապատասխանում է ձայնեղ շ: Սակայն սա, ըստ երևույթին, պետք է բացատրել հայերեն ց և զ տառերի շփոթությամբ:

բ) Հայերենի խուլերը ասորերենում տառադարձված են ձայնեղներով.

պ>փ 14, 21—26, 33, 36, 42, 64, 76, 80, 98, 100, 101, 103, 110—112, 114, 126, 128:

կ>ք 1, 13, 14, 17, 22, 25, 28, 30, 36—43, 47, 58—60, 63, 77, 78, 80, 83, 86, 91, 93, 97, 98, 109—113, 123—125:

տ>դ 8—10, 16, 18, 20, 22, 28, 29—32, 36, 39, 41, 42, 51, 56, 62, 67, 75, 78, 80, 81, 85, 94, 103, 107—109, 111, 112:

ծ>յ 11, 99, 115:

ճ>յ 24, 106, 114:

Խուլերի ձայնեղացման օրինաչափությունից շեղվում են հետևյալ բառերը. Aspurages (17), Gostandin (116), Stephane (119), Rstakhes (74), Apahuni (5), Arjuxe (11), Gokovit (40), Kiuron (55), Kodais (56), Varthabeth (126): Սակայն սրանցից առաջին չորսը հաստատում են մի այլ օրինաչափություն, ըստ որի՝ միջին հայերենում սուլականներին և շփականներին հաջորդող խուլերը փոփոխություն չեն կրում⁶⁶: Ինչ վերաբերում է մնացյալ դեպքերին, ապա նրանց համար բավարար բացատրություն գտնել, ըստ Երևույթին, հնարավոր չէ: Հաշվի առնելով նրանց ներքին անհամաձայնությունը (Երբ, օրինակ՝ կ-ն կարող է տառադարձվել և՛ k-ով, և՛ kh-ով, և՛ x-ով), կարելի է, իհարկե, ենթադրել, որ այդ շեղումները պատահականություն կամ գրչական սխալների արդյունք են:

դ) Հայերենի ձայնեղներին ասորական տառադարձությամբ համապատասխանում են շնչեղ-խուլեր.

բ>ph 1, 3, 4, 6, 7, 66—69, 71, 72, 110, 120:

գ>kh 19, 29, 33, 47—49, 51—54, 61, 67—69, 79, 116—118:

դ>th 7, 15, 27, 32, 87, 89, 90, 94—96, 110, 123, 126:

ձ>ç օրինակներում արտահայտված չէ:

ջ>ç 45, 114:

Բացառություն են կազմում՝ Ardavasd (8), Gokovit (40), Betheškh (27) և Nig (65) բառերը: Առաջին բառում ձ-ի ձայնեղության պահպանումը, ամենայն հավանականությամբ, պատահականության արդյունք է, քանի որ նրա կողքին կա նաև Artavasth ձևը: Gokovit բառում ց ձայնեղի խլացման փաստը գուցե կարելի է բացատրել ասորերեն k(qōf) և kh(kāf) տառերի շփոթությամբ: Հաջորդ երկու բառի համար բացատրություն չենք գտնում: Իսկ ինչ վերաբերում է Ervand (35), Mambre (57), Mandaguni (60), Pharanjem (70), Smbad (85), Gostandin (113) բառերին, ապա նրանք չեն հակասում նշված օրինաչափությանը, քանի որ, ինչպես հայտնի է, միջին հայերենում ռնգային ս և ն հնչյուններին հաջորդող ձայնեղ հայականների որակը պահպանվում է⁶⁷: Նշված բացառություններով հանդերձ՝ հայերեն ձայնեղների շնչեղ-խլացման Երևույթը ըստ ասորական տառադարձության կասկած չի կարող հարուցել: Միայն պետք է նշել, որ այդ տառադարձությունը չի կարողանում հստակություն ապահովել ր ձայնեղի փոփոխման բնույթը որոշելու հարցում: Ասորերենում կա միայն մի ph, որը փոխառյալ բառերում հնուց ի վեր գրվում է և՛ խուլ ք-ի, և՛ շնչեղ-խուլ ph-ի փոխարեն: Հունարենից կատարված փոխառություններում միևնույն ph-ն փոխարինում է և՛ π-ին, և՛ φ-ին, այսպես՝ phapha—παπα, phaphiron—φαφίρον, phrologos—φρολογος, և phulake—φυλάκη, philosopha—φιλοσοφος, phasis—φασίς և այլն: Այնպես որ, երբ հայերեն ք-ի դիմաց գրված է ասորերեն ph, վստահորեն չի կարելի ասել՝ այստեղ առկա է ձայնեղի շնչեղ-խլացման, թե խլացման Երևույթը: Այնուամեն-

⁶⁶ Սակայն Երբեմն նույնիսկ այս դիրքում Միրայելի մոտ խուլերը ձայնեղանում են՝ Ašdišad (16), Sbarabed (80), Sdephanos (81):

⁶⁷ Հմմտ. Ակնարկներ, էջ 115: Այս օրենքից շեղվում են միայն Mankhinos (61) և Phakhirevant (68) բառերը, որտեղ գ-ն ն-ից հետո մի դեպքում դարձել է շնչեղ-խուլ, մյուսում՝ խուլ, ինչպես նաև S[in]çeṣevan (82) բառը, որտեղ նույն դիրքում ձ-ն դարձել է հ:

նայնիվ տառադարձական այս անհարմարությունը չի կարող խախտել մի եզրակացություն, որը հաստատվում է նույն շարքի մյուս բաղաձայններին վերաբերող տասնյակ անվիճելի փաստերով: Եթե զ, ղ, ջ բաղաձայնները դարձել են շնչեղ-խուլեր⁶⁸, ապա Բ-ն չէր կարող մնալ ձայնեղ կամ վերածվել խուլի:

Ի մի բերելով նշված փաստերը, տեսնում ենք, որ XII—XIII դդ. ասորական աղբյուրներում իր արտահայտությունն է գտել միջին հայերենի պայթական և պայթա-շփական բաղաձայնների երկաստիճան խլազուրկ համակարգը⁶⁹:

b (պ) g (կ) d (ա) j (ծ) ʎ (ճ)
ph (փ, բ) kh (ք, գ) th (թ, դ) ç (ջ, ձ) c (չ, ջ)

Ասորական աղբյուրները արտացոլում են միջին հայերենի հնչյունաբանության նաև այլ առանձնահատկություններ.

դ) Այն, որ հայերեն դ-ին ասորական տառադարձությամբ համապատասխանում է ʎ (գրությամբ՝ g), մի անգամ ևս հաստատում է, որ միջին հայերենում գրաբարյան դ-ն հնչվում էր արդեն ʎ. հմմտ. 2, 12, 33, 34, 38, 42, 46, 48, 50, 82, 92, 93, 99, 104, 105, 107, 117: Միակ բացառությունը ʎabakhcūr — Ճապաղչուր (114) բառն է, որտեղ հայերեն դ-ի դիմաց զրված է kh (ասորերենում ձայնավորից հետո = փ): Սակայն սա էլ դրսևորումն է մի այլ օրինաչափության, ըստ որի՝ խուլի հարևանությամբ ʎ-ն միջին հայերենում խլանում է, այսինքն՝ դառնում ʎu⁷⁰:

ե) Միջին հայերենում ʎ > ʎ հնչյունափոխության կողքին արձանագրված է նաև բառակցի ʎ-ի մասնակի կորուստը, որի վկայությունը գտնում ենք 1, 66, 91, 124 բառերում:

զ) Հնչյունափոխված ձայնեղից առաջ ընկած դիրքում միջին հայերեն զ սուլականի խլացման երևույթը վկայված է Ardavasd||Artavasth (8) և Varasthad (93) բառերում:

է) Թեև սովորաբար ասորական աղբյուրներում հայերեն և-ին համապատասխանում է h (6, 7, 15, 23, 43, 44, 64, 76, 77, 101), սակայն Mlex (119) և Xethum (127) բառերը խախտում են այս օրինաչափությունը և հավաստում միջին հայերենում և > փ մասնակի (Վասպուրականին հատուկ) հնչյունափոխության առկայությունը⁷¹:

ը) 11, 23, 35, 39, 82, 89 օրինակները վկայում են, որ միջին հայերենում ւ ձայնորդը ձայնավորից առաջ համընկել է վ բաղաձայնին⁷²:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ասորական աղբյուրները արժեքավոր նյութ են մատակարարում միջին հայերենի հնչյունաբանության ուսումնասիրման համար, և պետք է հուսալ, որ այդ նյութը այսուհետև կդրվի գիտական շրջանառության մեջ:

68 Ինչպես նշվեց, ʎ > ʎ օրինակներում արտահայտված չէ, իսկ ʎ-ի շնչեղ-խլացումը նույնպես հստակ չէ, քանի որ ասորերենում ʎ հնչյունի բացակայության պատճառով տառադարձված է s-ով, որը կարող էր փոխարինել և՛ 6-ին, և՛ չ-ին:

69 Հմմտ. Ակնարկներ, էջ 122:

70 Հմմտ. Ակնարկներ, էջ 156:

71 Նույն տեղում, էջ 133:

72 Ավելին, Միթայելի մոտ այդ բանը կատարվել է նույնիսկ երկբարբառային դիրքում՝ Divrige—Տիրիկէ (109):

**ФОНЕТИКА СРЕДНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА
ПО ДАННЫМ СИРИЙСКИХ ИСТОЧНИКОВ**

Л. А. ТЕР-ПЕТРОСЯН

(Р е з ю м е)

В арменистике уже давно установлено, что фонетика среднеармянского языка претерпела существенные изменения по сравнению с фонетикой древнеармянского. Ввиду того, что среднеармянские тексты написаны традиционной орфографией, для выявления закономерностей этих изменений специалистами использованы следующие средства: а) заимствования среднеармянского из других языков, б) рукописные отклонения от традиционной орфографии и в) данные современных армянских диалектов. Подчеркнуто также значение транскрипции заимствованных иностранными языками или просто упоминаемых в иностранных источниках армянских слов. Этот способ исследования мог бы дать наиболее объективные результаты, поскольку иностранная транскрипция преодолевает самое трудное препятствие на пути к изучению фонетики среднеармянского языка—скованность традиционной орфографией. Однако, несмотря на это, иноязычные источники пока не удостоены должного внимания, по-видимому, из-за скудости или неизвестности содержащихся в них полезных данных. Пробел частично могут восполнить сирийские источники—Хроеник Микхила Сирийца и Бар-Эбрея, а также Анонимная хроника XIII в., в которых упоминаются сотни армянских слов, по преимуществу личные имена и географические названия. Изучение этого ценного материала показывает, что в сирийских источниках XII—XIII вв. нашла свое отражение та система взрывных согласных среднеармянского языка, в которой исторические звонкие перешли в глухие-придыхательные, глухие—в звонкие, а глухие-придыхательные не потеряли своего качества. Кроме этого важного результата, сирийские источники подтверждают также и другие особенности фонетики среднеармянского языка.